# ԻՏԱԼԻԱ

Առողջապահության և բժշկագիտության բնագավառում համագործակցության հուշագիր է ստորագրվել 1997թ. ապրիլի 2-ին, Հռոմ քաղաքում:

Ստորագրող կողմերն են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը և Իտալիայի առողջապահության նախարարությունը:

Համագործակցության շրջանակներն են.

- տեղեկությունների, փորձի, մասնագետների փոխանակություններ, մասնակցություն միմյանց գիտական միջոցառումներին, համատեղ գիտական աշխատանք,
- ուղղակի համագործակցություն բժշկագիտական հաստատությունների միջև,
- տեղեկությունների, առողջապահական, վիճակագրական տվյալների, համաճարակաբանական հաշվետվությունների փոխանակություն: